ՍՈՎԵՏԱՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՄԿԿ XXIV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՑ ՀԵՏՈ

Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, Կ. Ս. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

Մեր երկրի պատմության մեջ կոմունիստական կուսակցության համագումարներն այն խոշոր իրադարձություններն են, որոնք նշում են սովետական ժողովրդի ստեղծագործ և վերափոխիչ գործունեության հիմնական էտապները, օգնում են ըմբռնելու անցյալը և լուսավորում են ապագայի ուղին։ Դրանով է պայմանավորված ՍՄԿԿ համագումարների հսկայական պատմական նշանակությունը, դրանց վիթխարի ազդեցությունը ինչպես երկրի զարգացման, այնպես էլ համաշխարհային պատմության ընթացքի վրա։

1971 թ. կայացած Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարը տվեց արդիականության կարևորագույն պրոբլեմների, սովետական հասարակության և համաշխարհային սոցիալիստական սիստեմի զարգացման օրինաչափությունների, կոմունիզմի հետագա կառուցման ուղիների խոր վերլուծությունը։ Համագումարը մշակեց ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 9-րդ հնգամյա պլանի հիմնական խնդիրները, մի հնգամյակ, որի հաջող կատարումը նոր խոշոր քայլ հանդիսացավ սովետական հասարակության՝ դեպի կոմունիզմ տանող ճանապարհին։

ՍՄԿԿ XXIV համագումարից հետո անցած ժամանակաշրջանը հաստատեց մեր պետության արտաքին և ներքին քաղաքականության գիտականորեն խորապես հիմնավորված այն կուրսը, որն ընդունվել էր համագումարի կողմից։ Հաջողությամբ կատարվել են 9-րդ հնգամյա պլանի՝ կուսակցության նախանշած խնդիրները։ Արագացել են գիտա-տեխնիկական առաջընթացի և աշխատանքի արտադրողականության աճի տեմպերը, բարձրացել են բնակչության նյութական բարեկեցությունը և կյանքի կուլտուրական մակարդակը։ Էլ ավելի է բարձրացել կուսակցության կազմակերպչական և քաղաքական դերը մեր հասարակության կյանքում։ «Մեր բոլոր նվաճումները,— ասված է ՍՄԿԿ Կենտկոմի՝ XXV համագումարին ներկայացվող «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թվականների հիմնական ուղղությունները» նախագծում,— բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության, մտավորականության, բոլոր միութենական հանրապետությունների աշխատավորների անձնվեր ջանքերի՝ լայնորեն ծավալված համաժողովրդական սոցիալիստական մրցության արգասիքն են։ Նոր ուժով դրսևորվեց Սովետական Միության կոմունիստական կուսակցության ղեկավար և ուղղություն տվող դերը, նրա բազմաբովանդակ կազմակերպչական ու քաղաքական գործունեությունը սովետական ժողովրդին տնտեսական և կուլտուրական շինարարության խնդիրների հաջող լուծման համար մոբիլիզացնելու ուղղությամբ»[1]։

---

[1] «Սովետական Հայաստան», 14. XII. 1975։

ՍՄԿԿ XXIV համագումարը նշեց հասարակական գիտությունների, այդ թվում նաև պատմագիտության զարգացման հիմնական խնդիրները։ Համագումարն ընդգծեց ՍՍՀՄ սոցիալ-տնտեսական զարգացման համաշխարհային հեղափոխական պրոցեսի, մեր երկրում սոցիալիստական և կոմունիստական շինարարության փորձի հետազոտման հետագա ուժեղացման անհրաժեշտությունը։ «Հասարակական գիտությունների ավելի ու ավելի վճռական շրջադարձ դեպի այն պրոբլեմների մշակումը, որոնք հրատապ են ներկայի և ապագայի համար՝ ահա թե մեզ ինչ է հարկավոր»— ասված է ՍՄԿԿ XXIV համագումարին Կենտկոմի տված հաշվետվության մեջ[2]։

Այսպիսով, սովետական պատմագիտության կարևորագույն խնդիրն է սովետական հասարակության պատմության պրոբլեմների մշակումը, սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման պայմաններում կոմունիստական կուսակցության գործունեության փորձի ուսումնասիրումն ու ընդհանրացումը, այդ փորձի միջազգային նշանակության բացահայտումը։ ՍՄԿԿ XXIV համագումարից հետո անցած ժամանակաշրջանում սովետահայ պատմագիտությունը որոշակի հաջողություններ է ձեռք բերել նշված խնդիրների լուծման գործում։

Սովետահայ պատմաբանների ուշադրության կենտրոնում առաջվա նման գտնվել է իրադարձություններով հարուստ 1917—1920 թթ. ժամանակաշրջանը, Հայաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար մղված պայքարի պատմությունը։ Ինչպես ամբողջ պրոբլեմը, այնպես էլ նրա առանձին հարցեր ենթարկվել են հետագա խոր ուսումնասիրության։ Սովետական պատմագրության անվիճելի նվաճումն է Անդրկովկասի պատմաբանների կողմից ստեղծված «Սովետական իշխանության հաղթանակը Անդրկովկասում» (Թբիլիսի, 1971) ընդհանրացնող աշխատությունը, որտեղ հեղինակային կոլեկտիվը հենվելով Հոկտեմբերի պատմության հետազոտման ասպարեզում սովետական պատմագիտության ձեռք բերած նվաճումների վրա, քննել է Անդրկովկասում հեղափոխական պրոցեսի օրինաչափությունները ու առանձնահատկությունները, երկրամասում սովետական իշխանության համար մղված պայքարի ընթացքը։ Այդ աշխատության լույս ընծայմամբ ավարտվեց երկրի տարբեր շրջաններում սոցիալիստական հեղափոխության հաղթանակին նվիրված կապիտալ հետազոտությունների մատենաշարի ստեղծումը։

Ինչպես արդեն նշվեց, խոր ուսումնասիրության են ենթարկվել սոցիալիստական հեղափոխության պատմության ընդհանուր պրոբլեմի առանձին հարցեր՝ Վ. Ի. Լենինի դերը Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ստեղծման և ղեկավարման գործում, հայ ժողովրդի զավակների մասնակցությունը համառուսաստանյան հեղափոխական շարժմանը, Հոկտեմբերյան հեղափոխությունը և հայ ժողովրդի ազգային վերածնունդը և այլն։ 1973 թ. Երևանում տեղի ունեցավ ՍՍՀՄ ԳԱ «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության պատմությունը» գիտական խորհրդի և նրա հայկական մասնաճյուղի հրավիրած գիտական նստաշրջանը, որը նվիրված էր «Հոկտեմբերյան հեղափոխությունը և ազգային հարցը» պրոբլեմին և որը, անկասկած, մեծապես խթանեց հետազոտական աշխատանքի հետագա զարգացումը այդ բնագավառում։

---

2 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 3, Երևան, 1972, էջ 394։

Սովետահայ պատմաբանները շարունակեցին այնպիսի կարևոր պրոբլեմի հետազոտությունը, ինչպիսին է Հայաստանում սոցիալիստական շինարարության պատմությունը։ Այդ ուղղությամբ հրատարակվել են մի շարք մենագրություններ, որոնք, մասնավորապես, նվիրված են Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությանը, սոցիալիստական քաղաքների ու ձեռնարկությունների պատմությանը, մինչպատերազմական ժամանակաշրջանում սփյուռքահայության հայրենադարձությանը և այլն։ ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակը, որը նշվեց 1972 թ., խթանեց ՍՍՀՄ կազմավորմանը, ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում Հայաստանի սոցիալ-տնտեսական և կուլտուրական զարգացմանը նվիրված մի շարք աշխատությունների ասպարեզ գալը։ Հարստացավ սոցիալիստական շինարարության պատմության աղբյուրագիտական բազան. հրատարակվել է փաստաթղթերի և նյութերի ժողովածու՝ նվիրված հայ ժողովրդի սոցիալիստական մշակույթի ձևավորման և զարգացման պատմությանը։

Զգալիորեն հարստացել է Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի պատմությանը նվիրված գրականությունը։ Մեծ հաղթանակի 30-ամյակը, որը նշվեց 1975 թ., կյանքի կոչեց Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում Սովետական Հայաստանի պատմությանը, թշնամու դեմ ձեռք բերած հաղթանակի գործում հայ ժողովրդի մասնակցությանը և այլ հարցերի նվիրված գիտական, մեմուարային և փաստագրական բնույթի մի ամբողջ շարք աշխատություններ։ Այստեղ առաջին հերթին պետք է նշվի Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի, ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր Մլի հայկական մասնաճյուղի և Հանրապետության արխիվային վարչության պատրաստած «Սովետական Հայաստանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին» (Երևան, 1975) փաստաթղթերի և նյութերի ժողովածուն, ուր տեղ են գտել ավելի քան 500 փաստաթղթեր։ Ժողովածուն արտացոլում է հանրապետության կուսակցական կազմակերպության բազմակողմանի գործունեությունը պատերազմի տարիներին, բանվոր դասակարգի, գյուղացիության և մտավորականության հերոսական աշխատանքը, հայ ժողովրդի զավակների սխրագործությունները ռազմի դաշտում, նրանց մասնակցությունը օկուպանտների դեմ մղվող պարտիզանական պայքարին, սփյուռքահայության ավանդը ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում և այլն։ Հրատարակվել են թշնամու ջախջախման ընդհանուր գործին հայ ժողովրդի մասնակցությանը նվիրված մի շարք աշխատություններ։

Ցույց տալով սովետահայ պատմագիտության ձեռք բերած նվաճումները սովետական հասարակության պատմության պրոբլեմների մշակման գործում, անհրաժեշտ է նաև նշել, որ այդ ասպարեզում դեռևս զգալի աշխատանք պետք է կատարել։ Ասվածը առանձնապես վերաբերում է զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանին։ 1970 թ. հրատարակված «Հայ ժողովրդի պատմության» վերջին՝ ութերորդ հատորը Հայկական ՍՍՀ պատմության սիստեմատիկ շարադրանքը հասցնում է մինչև 1965 թ.։ Վերջին տասնամյակը, որն աչքի է ընկնում հանրապետության սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքում ձեռք բերված մեծ նվաճումներով, պատշաճ կերպով չի լուսաբանված սովետահայ պատմաբանների կողմից։ Մինչդեռ, ինչպես հայտնի է, ՍՄԿԿ XXIV համագումարը ձևակերպել է արդի ժամանակաշրջանի ուսումնասիրության համար մեծ նշանակություն ունեցող այնպիսի դրույթ-

ներ, որոնք վերաբերում են զարգացած սոցիալիստական հասարակությանը, սովետական հասարակության սոցիալական կառուցվածքին և նրա զարգացման տենդենցներին, սովետական հասարակության սոցիալ-քաղաքական և գաղափարական միասնության հետագա ամրապնդմանը և այլն։ Զարգացած սոցիալիզմի պատմության այս և մյուս պրոբլեմների ուսումնասիրությունը դառնում է սովետական պատմագիտության կարևորագույն խնդիրը։ Դա ուղղակի մատնանշել է ՍՄԿԿ Կենտկոմը իր վերջերս ընդունած «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թվականների հիմնական ուղղությունները» նախագծում, որտեղ որոշված են հասարակական գիտությունների բնագավառում գիտական ուսումնասիրությունների զարգացման հետևյալ կարևորագույն ուղղությունները. «շարունակել ՍՄԿԿ-ի համաշխարհային պատմական փորձի գիտական ընդհանրացման աշխատանքը. հետազոտել զարգացած սոցիալիզմի տեսական պրոբլեմները. նրա՝ կոմունիզմի վերաճելու օրինաչափությունները, դրանց գործողության և օգտագործման մեխանիզմը. շարունակել կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, հասարակական հարաբերությունների կատարելագործման, նոր մարդու ձևավորման, սոցիալիստական ապրելակերպի զարգացման տեսության մշակումը»[3]։

Նշված խնդիրների լուծման գործում մեծ անելիքներ ունեն պատմաբանները։ Սովետական Հայաստանի պատմաբանները պետք է լուծեն այնպիսի լուրջ խնդիրներ, ինչպես հանրապետության բանվոր դասակարգի՝ որպես սովետական հասարակության առաջատար ուժի ամբողջական պատմության ստեղծումը, Սովետական Հայաստանի գյուղացիության ամբողջական պատմության ստեղծումը, մտավորականության ամբողջական պատմությունը, հասարակության սոցիալական կառուցվածքում տեղի ունեցող վերափոխությունների հետազոտումը։ Այդ խնդիրներից են նաև սովետահայ մշակույթի զարգացման օրինակով սովետական ժողովուրդների մշակույթների փոխադարձ մերձեցման և հարստացման պրոցեսի քննարկումը, ինչպես նաև զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանի այլ պրոբլեմներ։

ՍՄԿԿ XXIV համագումարին հաջորդած հնգամյակը սովետահայ պատմագրության զարգացման համար բեղմնավոր շրջան էր նաև նախասովետական, անտագոնիստական հասարակարգերի դարաշրջանների ամբողջական պատմությունն ընդգրկող և ամփոփող աշխատություններ ստեղծելու առումով։ Այդ տեսակետից հարկ է առաջինը հիշատակել պատմության ինստիտուտի կողմից հանրապետության և նրա սահմաններից դուրս գտնվող պատմաբանների, գրականագետների, մշակույթի և հայագիտության այլ մարզերի լավագույն մասնագետների մասնակցությամբ «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի առաջին, չորրորդ և հինգերորդ հատորների ստեղծումը։ Բազմահատորյակում գիտականորեն ընդհանրացվեցին անցյալի, մասնավորապես սովետահայ պատմագրության ցարդ ունեցած նվաճումները և, որ գլխավորն է, ըստ ամենայնի լուսաբանվեցին հայ ժողովրդի զարգացման օրինաչափությունները, նրա գոյատևման ու առաջընթացի համար էական նշանակություն ունեցող իրադարձությունները։ Բազմահատորյակի չորրորդ և հինգերորդ հատորներում նման գլխավոր խնդիրը, որը կարմիր թելի նման

3 «Սովետական Հայաստան», 14. XII. 1975։

անցնում է երկու հատորների միջով — դա հայ-ռուսական հարաբերությունների և Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու պրոբլեմն է։

Չորրորդ հատորում հանգամանորեն քննվել են Հայաստանի ուշ միջնադարյան պատմության հիմնական առանցքը կազմող ազատագրական շարժումները և դրանց հետ սերտորեն առնչվող հայ-ռուսական հարաբերությունները, բացահայտվել է այն պատմական իրողությունը, որ դարեր շարունակ հայ ազատագրական միտքը ելք էր որոնում՝ արևելյան երկու բռնատիրական պետությունների՝ Թուրքիայի և Պարսկաստանի ծանր լծից ազատագրվելու համար։ Եվ եթե նախապես Արևմտյան Եվրոպայի երկրների օգնության հետ էր կապվում Հայաստանի ազատագրման խնդիրը, ապա XVII դ. երկրորդ կեսին անվերադարձ շրջադարձ է կատարվում դեպի աստիճանաբար առաջադիմող հյուսիսային հզոր հարևանը։ Պետրոս I-ի ժամանակաշրջանում վերջնականապես ձևավորվում և ամրապնդվում է Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը ազատագրելու իրական հիմքեր ունեցող քաղաքական կողմնորոշումը։ XVIII դ. երկրորդ կեսին աշխուժանում են հայ-ռուսական տնտեսական և հատկապես քաղաքական կապերը։ Հայկական շրջաններում մշակվում են Հայաստանը Ռուսաստանի օգնությամբ ազատագրելու և նրա հովանավորության ներքո հայկական պետականությունը վերականգնելու նախագծեր։ Ավելին, Ռուսաստանի կողմից անգամ գործնական որոշ քայլեր են կատարվում Անդրկովկասը, այդ թվում նաև Հայաստանը, ազատագրելու ուղղությամբ։ Հինգերորդ հատորում լայնորեն լուսաբանվել է այդ իրադարձությունը և մասնավորապես անցյալ դարի առաջին երեսնամյակի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ընթացքում երկրամասի հայ բնակչության անվերապահ կողմնորոշումն ու բազմակողմանի օգնությունը ռուսական բանակին։ Վեր է հանվել նաև Կովկաս աքսորված ռուսական հեղափոխական առաջին սերնդի խիզախ ներկայացուցիչների՝ դեկաբրիստների, մասնակցությունը ռազմական գործողություններին և մասնավորապես Երևանի գրավմանը, բացահայտվել է Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու՝ հայ ժողովրդի ճակատագրի համար բախտորոշ նշանակություն ունեցող իրադարձության առաջադիմական նշանակությունը։ Դրանով ամենից առաջ հայ ժողովուրդը փրկվեց ֆիզիկական բնաջնջման վտանգից, ինչպես նաև նպաստավոր պայմաններ ստեղծվեցին նրա ազգահավաքման համար։ Այն կարևոր նշանակություն ունեցավ երկրի տնտեսության և մշակույթի զարգացման համար։ Վերջապես իր պատմական ճակատագիրը առմիշտ կապելով ռուս մեծ ժողովրդի հետ, հայ ժողովուրդը իր բախտը կապեց նրա հասարակական-քաղաքական կյանքի, հետևաբար նաև հեղափոխական զարդացման հեռանկարների հետ։

Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների համատեղ ազատագրական պայքարի տեսանկյունով վեր է հանվել հայ ժողովրդի XIV—XIX դդ. սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային բովանդակ պատմությունը։ Առաջին անգամ ընդարձակ տեղ է հատկացվել և բավարար չափով լուսաբանվել է հայ ժողովրդի անբաժանելի մասը կազմող և նրա պատմությունն ամբողջացնող զաղթաշխարհի հայ զանգվածների պատմությունը։ Ինչպես հայտնի է, ուշ միջնադարում, մայր հայրենիքում ստեղծված ծանր պայմանների հետևանքով, զգալապես հայ գաղթավայրերում էր զարգանում ինչպես հայկական մշակույթը, այնպես էլ հասարակական-քաղաքական կյանքը։

Հայաստանի հին և հնագույն դարաշրջանների՝ նախնագարյան-համայնական և ստրկատիրական կարգերի ժամանակաշրջանի պատմությանն է նվիրված բազմահատորյակի առաջին հատորը։ Գրավոր աղբյուրների և մասնագիտական գրականության մանրազնին ուսումնասիրության, մասնավորապես, վերջին տասնամյակներում հնագիտական պեղումների շնորհիվ հայտնաբերված հարուստ նյութերի հիման վրա բացահայտված է նախնադարյան համայնական հասարակարգի աստիճանական զարգացումը, նրա առանձին փուլերի առկայությունը Հայաստանում, տոհմատիրական կարգերի քայքայումը և դասակարգային հարաբերությունների սկզբնավորումը։ Փոքր Ասիայի երկրների պատմության ընդհանուր ֆոնի ու տեղական նյութի հիման վրա լուսաբանված են Ուրարտուի և ապա հայկական պետության ստրկատիրական բնույթը, նրա զարգացումն ու առանձնահատկությունները, հայ ժողովրդի կազմավորումը, նրա սոցիալ-տնտեսական, քաղաքական պատմությունը և մշակույթը։ Բազմահատորյակի առաջին հատորում պատմագիտության արդի ժամանակաշրջանի մակարդակով ու նրա պահանջներին համապատասխան արծարծված շատ պրոբլեմների հետազոտումը էական նշանակություն ունի ոչ միայն Կովկասի, այլ նաև հարակից երկրների վաղ անցյալի պատմության ուսումնասիրության համար։

Երևանի պետական համալսարանի կողմից առանձին գրքով հրատարակվեց հնագույն ժամանակներից մինչև մեր օրերն ընդգրկող «Հայ ժողովրդի պատմությունը»։ Նրանում, բնականաբար, արտացոլվել են ժողովրդի բազմադարյան պատմության միայն կարևոր դրվագներն ու իրադարձությունները։ Գիրքն ամփոփ ու մատչելի ձևով ներկայացնում է մեր ժողովրդի ամբողջական պատմությունը և նպատակ է հետապնդում բավարարելու ընթերցող լայն հասարակայնության պահանջները։ Համալսարանը հրատարակել է նաև Հայաստանի հին և միջին դարերի (հնագույն շրջանից մինչև XVIII դարի վերջը) ժամանակաշրջանն ընդգրկող դասագիրք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողության համար։

Վերջին տարիներին սովետահայ պատմագիտության ուշադրության կենտրոնում է եղել ՍՍՀՄ ժողովուրդների պատմական կապերին ու համագործակցությանը նվիրված թեմատիկան։ Հայ և ուկրաինական ժողովուրդների պատմական կապերին ու բարեկամությանը նվիրված հոդվածների ժողովածուի 3-րդ հատորը (1971 թ.) Հայաստանի և Ուկրաինայի պատմաբանների տակավին 1950-ական թվականներին սկզբնավորված գիտական համագործակցության լավագույն դրսևորումներից մեկն է։ Փաստական հարուստ ու թարմ նյութերի հիման վրա համատեղ ուժերով լուսաբանվել են Արևմտյան Ուկրաինայի միջնադարյան հայ գաղթավայրերի սոցիալ-տնտեսական ու մշակույթի պատմության առանձին ուշագրավ դրվագները, ռուս ժողովրդի հետ միասին երկու ժողովուրդների զավակների մասնակցությունը ցարիզմի դեմ ուղղված հեղափոխական ընդհանուր պայքարին, ապա նրանց եղբայրական համագործակցությունը սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման գործում։

Ուսումնասիրման առանձին խնդիր է հանդիսացել XVIII դ. ազատագրական պայքարում հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը։ Ռուսաստանի առաջխաղացումը դեպի Կովկաս և Պետրոս I-ի Կասպիական արշավանքը մեծ հույսեր առաջացրեց ու ոգեշնչեց հայ և վրաց ժողովուրդներին, որոնք պայքարի ելան թուրքական ու պարսկական բռնակալական լուծը թո-

թափելու համար։ Ճիշտ է, ներքին ու արտաքին մի շարք հանգամանքների բերումով նրանք չհասան իրենց նպատակին, սակայն սկսված ազատագրական շարժումը, տարբեր ելևէջներով ու ձևերով շարունակվեց նաև հետագայում, գրեթե մի ամբողջ դարի ընթացքում և XIX դ. առաջին երեսնամյակում ի վերջո հանգեցրեց Անդրկովկասի միացմանը Ռուսաստանին։

Արժեքավոր մենագրություններ են հրատարակվել Ղրիմի հայկական գաղութի պատմության նոր շրջանի, Կիլիկիայի հայկական պետության սոցիալ-տնտեսական հարաբերությունների, հին Հայաստանի քաղաքների, հայ պարբերական մամուլի պատմության առանձին հարցերի վերաբերյալ։

Անցած հնգամյակում սովետահայ պատմագրությունը հատուկ ուշադրություն է դարձրել աղբյուրագիտական հարուստ բազա ստեղծելու խնդրին։ Ռուսերեն հրատարակվել է «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին» փաստաթղթերի և նյութերի ժողովածուի առաջին հատորը (1800—1813 թթ.), նախապատրաստվել է և շուտով տպագրության կհանձնվի այդ կարևոր իրադարձությունների վավերագրական պատմության երկրորդ հատորը, որն ընդգրկելու է 1813—1828 թթ. ժամանակաշրջանը։ Շարունակվել է «Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին» ընդհանուր մատենաշարով լատինական, հունական և արաբական աղբյուրների հրատարակությունը։

Սովետահայ պատմագրության և առհասարակ մարքսիստական հայագիտության կողմից ոչ միայն գիտահետազոտական ուսումնասիրությունների նյութ դարձան միանգամայն նոր պրոբլեմներ ու թեմաներ, այլ նաև կատարվեցին այնպիսի աղբյուրագիտական աշխատանքներ, որոնք նախասովետական պատմագրության ու բանասիրության տեսադաշտից կամ դուրս էին մնացել, կամ էլ մինչմարքսյան հայագիտությունն ի վիճակի չի եղել առաջ քաշել և գիտական պատշաճ մակարդակով իրականացնել։ Խոսքը վերաբերում է հայ միջնադարյան պատմության ու մշակույթի արժեքավոր աղբյուր հանդիսացող ձեռագրերի հիշատակարանների, մանր ժամանակագրությունների ու կանոնագրքերի հրատարակությանը։ Վերջին տարիները խիստ բեղմնավոր եղան նաև աղբյուրագիտության այս կարևոր մարզում։ Հրատարակվեց «Կանոնագիրք հայոց» գրքի երկրորդ հատորը։ Ինչպես և առաջին մասը, այն հրատարակվեց եղած ձեռագրերի բաղդատման և գիտական բնագիրը կազմելու միջոցով։ «Կանոնագիրքը» անգնահատելի աղբյուր է միջնադարյան Հայաստանի իրավունքի, քաղաքական ու սոցիալական պատմության համար։

Տակավին 1950-ական թվականներից սկսած պատմության ինստիտուտը, Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի հետ միասին, պարբերաբար հրատարակում է և այժմ հրապարակի վրա է դրել XIV—XV դդ. ձեռագրերի հիշատակարանների ստվար հատորները։ 1974 թ. հրատարակվեց հայերեն ձեռագրերի XVII դ. հիշատակարանները (1601—1620 թթ.), որոնք մեծապես լրացնում ու հարստացնում են մեր գիտելիքները ուշ միջնադարի պատմագրական աղբյուրներով աղքատիկ շրջանի վերաբերյալ։

Նկատելի աշխատանքներ են կատարվում պատմագրության ուղղությամբ։ Նախապատրաստվել և շուտով հրատարակության կհանձնվի «Սովետահայ պատմագրությունը հիսուն տարում» կոլեկտիվ աշխատությունը, որը կընդհանրացնի սովետահայ պատմագիտության կենդանի նվաճումները և կմատնանշի նրա բացերն ու անելիքները։

Սովետահայ պատմագիտությունը լայն պլաններով է դիմավորում ՍՄԿԿ XXV համագումարը, թեակոխում 10-րդ հնգամյակը։ ՍՄԿԿ առաջիկա XXV համագումարի որոշումները սովետական պատմաբաններին կզինեն տեսական նոր դրույթներով, նրանց ջանքերը կնպաստեն սովետական պատմական գիտության հրատապ խնդիրների լուծման գործին։

СОВЕТСКАЯ АРМЯНСКАЯ ИСТОРИЧЕСКАЯ НАУКА ПОСЛЕ XXIV СЪЕЗДА КПСС

В. Б. БАРХУДАРЯН, К. С. ХУДАВЕРДЯН

Резюме

XXIV съезд КПСС определил основные задачи общественных наук, в том числе и исторической науки.

Важнейшими задачами советских историков стали разработка проблем истории советского общества, изучение и обобщение деятельности Коммунистической партии в условиях строительства социализма и коммунизма. Как и прежде, в центре внимания историков Советской Армении находились вопросы изучения истории армянского народа в 1917—1920 гг., истории борьбы армянского народа за Советскую власть, социалистического строительства в Армении, участия армянского народа в Великой Отечественной войне, а также дружбы народов СССР.

За последние годы историками Советской Армении широко была освещена также история армянского народа древнего и средневекового периодов и нового времени, что нашло отражение в таких фундаментальных трудах, каковыми являются I, IV, V тт. многотомника «История армянского народа».